

Վ Ր Ա Յ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ի Յ

Սկսած անցեալ դարի քառամական թուականներից, վը-
րաց ազգը ունեցել է շարունակ նշանաւոր բանաստեղծներ և
վիպագիրներ: Ուրախալի է այն երեսյթը, որ ասպարէղից իջնող
վրացի տաղանդաւոր գրողները թողնում են իրանցից յետոյ
արժանաւոր յաջորդներ: Այսպէս, մինչև վաթունական թուա-
կանները փայլող անդրանիկ բանաստեղծներին հետեւում են այն-
պիսի խոչոր տաղանդներ, ինչպիսի են՝ Խիա Ճաւճաւաձե, Ակա-
լի Ծերերելի, Ալ. Ղազբեկ, Ռափայէլ Երխորաւի և ուրիշներ,
իսկ այդ վերջիններին՝ իննամական թուականներից ոկաած՝ մի
ամբողջ շարք երիտասարդ, թարմ ոյժեր, որոնցից մի քանիսի
տաղանդի խոչորութիւնը արդէն այժմեանից դուրս է ամեն
կասկածից: Զէ կարելի երջանիկ չը համարել վրաց նման մի
բուռն ժողովուրդ, որ սերունդ սերնդի յետեւից չնորհալի ու
համակրելի գրողներ է դուրս բերում իրանից:

Այս վերջին տասնամեակում հանդէս եկած նոր վիպագիր-
ներից՝ առանձնապէս հասպարակութեան ուշադրութեանն են ար-
ժանացել Կրիստովիլին, Արագվիսպիրելին, Մելանիան և ուրիշներ,
մանաւանդ առաջինը. իսկ բազմաթիւ երիտասարդ բանաստեղծ-
ներից լաւ անուն է հանել մանաւանդ Վաժա-Փշաւելան, նորհիւ
իր ընտիր պօչմանների: Բանաստեղծների շարքումն է նաև մի
օրիորդ՝ Գանդեզիլին, որ ոսանաւոր թարգմանութեան վերա-
ծեց մօտ ժամանակներս Գրիբօնդովի «Գորե օտե յմա» նշանա-
ւոր կօմեդիան:

Նպատակ ունենալով քիչ-քիչ ծանօթացնելու այսուհետե
մեր ընթերցողներին վրացի թէ կի՞ և թէ նորագոյն, երիտա-
սարդ գրողների գործունէութեան հետ, այս անգամ մենք կա-
մենում ենք հրաւիրել ընթերցողների ուշադրութիւնը մի
ուրախառիթ երևոյթի վրայ վրայ գրականութեան մէջ, որ բաց
է ի բաց վերաբերում է մեզ, հայերիս:

Բանը նրանումն է, որ վրացի վիպագիրներն ու մանա-

ւանդ գրամատուրգները մի տարօրինակ թուլութիւն են ունեցել, սկզբից մինչև այսօր՝ իրանց գրուածներում հանդէս եկող անհամակրելի ու բացասական յատկութիւններով միայն օժտուած անձնաւորութիւններին հայ ծագում տալու: Այդ գրուածների հերոսները կարծես բաժանուած են լինում մի տեսակ սպիտակների ու սեերի, գառների ու այծերի, և անբախտ հայերը, ինչ տեսել կ'ուզի, «պատուաւոր» տեղ են բռնում միմիայն այծերի շարքում: Այդ սովորութիւնը, ինչպէս ասացինք, եկել է հէնց սկզբից, վրաց նոր գրականութեան հիմնուելու օրից: Այսպէս, առաջին վրաց կատակերգութիւնը, որ գրել է իշխ. Գիօրգի Երիբարակին («Բաժանում») 1850 թուին, մեծ զուարձութիւն էր պատճառում վրաց թատրոնի անդրանիկ այցելուներին նրա մէջ դուրս բերուած հայ վաճառականի տիպով. առաջին վրաց վեպը («Սոլոմոն Խառիչ Մէջզանուաշչիլի»), որ գրել է ու տպել 1861 թուին Լաւրինաթի Խրազիանին, ամբողջապէս նուիրուած է մի հայ մարդու (Սոլոմոն Խառիչ) և նրա ընտանիքի այլանդակ կողմերի նկարագրութեան: Էրիսթաւիի տուած օրինակը մի տեսակ օրէնք դարձաւ նրա բոլոր գրական յաջորդների համար և վրացներէն կօմեդիաների ու փոքրվիլների մեծ մասի «աղը» մինչև այսօր էլ հայերն են կազմում: Նոյնը արին և Սրդազիանիի յաջորդները իրանց բազմաթիւ վէպերում ու պատճուածքներում: Մենք զանց ենք անում յիշելու այստեղ սովորական լրագրական յօդուածները հայերի գէմ, որ մեր նպատակից դուրս է: Հայը վրաց գրականութեան մէջ եղել է մինչև այսօր մի տեսակ «թուրքի գլուխ», որին անդից վեր կացողը չմիացրել է, ինչքան սիրտն ուզել է: Նպատակիցս դուրս լինելով դարձեալ՝ կանգ առնելու այդ վերին աստիճանի տգեղ երեսյթի պատճառների վրայ, մենք այստեղ կը բերենք միայն այն զիսաւոր առարկութիւնը, որ լսել ենք այդ մասին բազմաթիւ վրացի գրուներից: «Երեսյթը, ասում են սրանք, բացատրում է այն մեծ տնտեսական գերով, որ հայերը խաղացել են վրաց կեանքում, գրաւելով այլ և այլ ճանապարհներով վերջինների կալուածները»:

Անցնում ենք յօդուածիս գլխաւոր նպատակին: Ասացինք, որ այժմ մեր հարեանների գրականութեան մէջ տեղի է ունենում մի ուրախառիթ երեսյթ հայերի վերաբերեալ: Այդ երեսյթը կայանում է նրանում, որ այժմ վրաց գրականութեան մէջ մէկ-մէկ գլուխ են բարձրացնում և այնպիսի արդար հոգիներ, որոնց համար աւելի թանգ է սուրբ ճշմարտութիւնը, քան անմիտ, փոտած բուտինան. ազգերի եղբայրական, համերաշխ յարաբերութիւնը—քան թթու, սիալ կերպով հասկացուած, մարդատեաց ազգասիրութիւնը:

Այդ պատուական վրացի մարդկանցից հայ-վրացական յարաբերութիւններին մի շաբթ առողջամիտ յօդուածներ նուիրեցին անցած 1900 թուականին «Կվալի» շաբաթաթերթի ոչպաշտօնական խմբագիր պ. Նոյ Ֆօրդանիան (չը պէտք է շփոթել միւս, պատմագէտ թ. Ֆօրդանիայի հետ), որ հանգուցեալ հայասէր Գիօրգի Ծերեթելու արժանաւոր աշակերտն է, նոյն թերթի քննադատ պ. Խվ. Գօմարքելին և «Մօսմբէ» ամսագրի տաղանդաւոր աշխատակից պ. Կիրա Աբաշիձեն: Ֆօրդանիայի միշած խելացի և մարդասէր հրապարակախօսական յօդուածներին մենք կը վերադառնանք ապագայում, որովհետեւ այս անգամ մենք աչքի առաջ ունենք գեղարուեստական գրականութիւնը, որին և նուիրուած են միւս երկու պարունակրի Աբաշիձեի և Գօմարքելու՝ գրուածքները:

Զրազուենք ուրեմն այդ երկուսով:

Ինչպէս վերեն ասացինք, վրացի նորագոյն աչքի ընկնող վիպականներից մէկն է պ. Մելանիան (ծածկանուն է): Դրա վերջին ընդարձակ արտադրութիւնը՝ «Արշաւանք» անունով, տրամադրում էր ամբողջ մի տարի «Մօսմբէ» ամսագրում և վերջացաւ գրա անցեալ 1900 թ. յուլիսի համարում: Վէպի անցքը կատարուում է կախէթում և նրա մի խումբ հայ հերոսները գունաւորուած են ու այլանդակուած հեղինակի անդուսպ հայատեցութեամբ: Արդարի դա մի «արշաւանք» է հայերի դէմ, մէկը այն գալրաբարոյ, անշրջահայեաց արշաւանքներից, որ ամսան հոչակեցին «հանգուցեալ» Վելիչկօի անունը: Թէ որ աստիճան անյաջող ու անհամակերելի է այդ «գեղարուեստական» արշաւանքը, այդ կարելի է մակարերել նախ՝ նրանից, որ նա խիստ դատավիետութեան ենթարկուեց նոյն իսկ այն ամսագրից, որի մէջ տպագրուում էր, և երկրորդ՝ այն հանգամանքից, որ Աբաշիձեի («Մօսմբէում») և Գօմարքելու («Կվալիում») խիստ յարձակումները վէպի դէմ երեցան դեռ ևս մի քանի ամիս նրա վերջանալուց առաջ, այն է փետրուար ամսին:

Ահա ինչ է ասում, ի միջի այլոց, պ. Աբաշիձեն «Արշաւանքի» մասին.

«Պ. Մելանիան, սուրը ձեռքին առնելով, պատերազմ է դուրս գալիս (հայերի դէմ) և աղաղակում: Ceterum censeo Cartaginem delendam esse: Ոչ մի գրականական վարդապետութեան (պ. Մելանիան խիստ հետեւող է նատուրալիստական դպրոցին) չի գայելի գրաւուել բոպէական շահերով, ևս առաւել այն վարդապետութեան, որ դաւանում է, թէ գրողի անձնաւորութիւնը պէտք է արտաքսուած լինի նրա սաեղծագործութիւններից: Այդ սկզբունքի խախտելու հետևանքը լինում է այն, որ

գեղարուեստական արտադրութիւնը կորցնում է իր յաւիտենական նշանակութիւնը և վերածւում է մի ժամանակաւոր—հրապարակախօսական շարադրութեան։ Բացի դրանից, այդպիսի արտադրութիւնների մէջ նկատում է դարձեալ մի խոչոր պակասութիւն։ գրականութեան մէջ կատարուած այդպիսի արշաւանքները (պատերազմները) վերջանում են միշտ իրականութեան այլանդակումովը։ Բնաւ կարելի չէ, օրինակի համար, որ մի որեւից մարդ՝ լինի նա հայ թէ վրացի, յայտնի իր վերջին կամքը մահուանից առաջ այն ձևով, ինչպէս այդ անում է մնանկացած Ղարամանը (հայ)՝ իր կտակի մասին իր որդի Ղազարի հետ խօսելիս։ Նոյնպէս երբէք կարելի չէ, որ ամեն մի հայ՝ լինի նա վաճառական թէ մուրացկան, կը լինի անպատճառ անպիտան և օձի ծնունդ, իսկ ամեն մի վրացի՝ ինչ աստիճանի ու գործի էլ լինի—օրինաւոր, կտարեալ մարդ։ Աղալօփ, Ղարամանի, Ղազարի և վերջինի որդոց (որ կոչուած են «աղգութեան երեք սիւներ») տիպերը (բոլորն էլ հայ)՝ կատարեալ մի ծաղրանկար (կարիկատուրա) են։ Հայերը, իրքն վաճառական ժողովուրդ, ունեն անշուշտ վաճառական դասակարգին յատուկ բոլոր թերութիւնները, բայց նրանք ունեն, ի հարկէ, մի՛ և նոյն ժամանակ և արժանաւորութիւններ, բայց պ. Մելանիան այդ արժանաւորութիւններն էլ կերպարանափոխել է թերութիւնների և դուրս է բերել հայերին այնպիսի մի գոյնով, որ բոլորովին անտեղի է գրականութեան մէջ... Սակայն պ. Մելանիայի մանրակըկիտ ուշադրութիւնից չը պէտք է խոյս տար այն հանգամանքը, որ երբ որ և է վրացու մէջ բանկում է փող կիզելու ցանկութիւն, —նա ցոյց է տալիս հայ վաճառականի բոլոր պակասութիւնները աւելի խոչորացած չափերով, անկարող լինելով սակայն մի և նոյն ժամանակ ունենալու նոյն հայի արժանաւորութիւններից և ոչ մէկը։ Զարմանալի է, որ հեղինակը իրերի խորը թափանցելու և կենաքի երեսյթների ամենատեսակ մանրամանութիւնները գրի առնելու։ իր ամբողջ ընդունակութիւնը գործ է ածել միայն նրա համար, որ համոզէ մնալ, եթէ ամեն մի հայ՝ լինի նա մուրացկան թէ դարբին (Ղարաման և Ղազար) կամ գիւղական ուսուցիչ (Մելիք և Աղալօ)՝ ձեռք է բերում հարստութիւն միջիայն չորհիւ այն բանի, որ գովութեամբ, աւազակութեամբ և ամեն տեսակ կեղտուա միջոցներով տանջում է ու քերթում վրացի գիւղացու, վաճառականի և իշխանի կազին (Գեղինա, Սանդրօ, Մարբէդաձէ և ուրիշներ)։ որ ապացուցանէ մազ՝ իրը թէ բախտը միշտ չորհիւ է անում հայերին, և եթէ վերջինները հազար անգամ էլ մնանկանան, բայ-

առ դարձեալ առատորէն կը վարձատրէ նրանց որդոցը (Ղաղար Ղարամանիչ), մինչդեռ վրացիներին, որքան էլ դրանք ընդուՆակութիւն ցոյց տան առուտուրի մէջ, դարձեալ նոյն բախտը կը կործանէ, և որ այդպիսի մի բախտի զեկավար կը լինեն միշտ իրանք հայերը: Այստեղ գրուածքի թեման հին է, դա յայտնի է մեր գրականութեան մէջ Գիօրգի Երիսթաւի (1850 թ.) օրեւրից, սակայն վերջինի պիէմներում չը կային բնաւ այն խստութիւնն ու անգժութիւնը, որ մենք տեսնում ենք պ. Մելանիայի վէպում: Անկասկած է, որ պ. Մելանիան դանում է այն կոռուփ ազգեցութեան տակ, որ մղուեց վերջին ժամանակներս մեր գրականութեան մէջ հայերի դէմ. բայց, կրկնում ենք դարձեալ, ինչ որ թոյլ է արւում հրապարակախօսական յօդուածներին, ներելի չէ գեղարուեստական արտադրութիւներին» *):

Յարգելի քննադատի այդ անաշտու և ազնիւ զգացմունքներով տոգորուած գրուածքը դուր չեկաւ «Խվերիա» լրագրին, որ մի ընդարձակ փէլիէտօնով փորձեց ջախջախել պ. Արաշիձէին, ճգնելով ապացուցանել, որ սա բոլորովին տգէտ է հայերին ճանաչելու գործում...

Մեր յիշած միւս քննադատը, «Կվալիի» աշխատակից պ. Իվ. Գօմարթելին, դարձնում է իր ուշագրութիւնը զլխաւորապէս պ. Մելանիայի «Արշաւանքի» յարուցած հարցերի տնտեսական կողմի վրայ: —«Որ մեր արխատոկրատիան, —ասում է պ. Գօմարթելին—աղքատանում է օրէցօր և նրա կաքերի նշանաւոր մասը անցնում է հայկական բուրժուազիայի ձեռքը, այդ վաղուց ի վեր ամենին յայտնի է, բայց հարցն այստեղ կայանում է այդ երեսյթի պատճառի հետազօտութեան մէջ: Գլխաւոր ուշագրութեան արժանին այսօր պէտք է լինի այդ պատճառը և ոչ այն սովորական խօսքը, թէ «հայերը պլոկում են վրացիներին»: Մինչդեռ Մելանիան իրան նեղութիւն չի տուել այդ պատճառի հետազօտութեամբ զբաղուելու և աշխատել է միայն մեզ ականատես անելու, թէ ինչպէս են կախէթում մաշկում հայերը վրացի թաւադներին (աղնուականներին): Ինչո՞ւ է արդեօք մեր ազնուականութիւնը իրան մաշկել տալիս: Ի՞նչն է արդեօք նրան ստիպում: Այս հարցերին մնալ Մելանիան ոչ մի պատասխան չէ տալիս: Կարծես եթէ հայերը գոյութիւն չունենային, մեր ազնուականների դասակարգը չէր մաքրագարդի իր բոլոր ունեցած-չունեցածը:

«... Երեսյթի պատճառը հէնց այսօրուայ մեր կեանքի պայ-

*) Տե՛ս „Պօամբէ“ 1900 թ. № 2, երես 21—22 (բ. բաժին):

մաններն են և ոչ թէ հայի բնութիւնը. հայերը լոկ անմնղ զէնք
են եղած, և են այժմ էլ՝ այդ կեանքի ձեռքում» *):

Վերջացնելով մեր յօդուածը, չենք կարող սրտանց չը
շնորհաւել մեր եղբայրակից վրացիներին՝ Ժօրդանիաների, Արա-
շիձէների և Գօմարթելիների հանդէս գալը նրանց նորագոյն
դրականութեան մէջ:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

*) ՏԵ՛՛ ՀԿՎԱԼԻՇ ՀԱՐՊԱՅԹԱՅԹԵՐԹԸ, 1900 թ. № 9.